

թիւնը Արիականութենէն աւելի շուտով կրցաւ իր վիշապաքաղութեան մէջ յաջողիլ, և իր անմիջական ազդեցութեան տակ գանուող ճարտարապետութեան, բանդակագործութեան և գրականութեան մէջէն կրցաւ մասամբ արմատախիլ հանել, որոնցմէ նախաքրիստոնէական շրջանէն ծանօթ են «Սրբոհանի լանջին կանգնեցրած է Անահիտի կոթողը . նման Արագածի Ղանգաֆէր լճակի ափին գտնուած Բազարոե վիշապներին կամ Գանձա լճակի ափին մինչև օրս կանգնած կոթողին, և Շիրակի Սոգիւղի գիւղի վիշապական աւազանների դէմ — գերեզմաննոցում կանգնած վիշապ արձանին. որոնք ամենն էլ բարբախտարար կանգնած են մնացել մինչև Իդար: Սրբոհանի լանջի այս կոթողի տակից բխում է մի առատաջուր աղբիւր, Գերագոյն Յայտնարիւն համարուած, որը վազում և լցում է Ոսկէ լճակը, որը Ոսկիաօր Գիրկն է կոչուում բնիկներէ»¹:

Մանրանկարչութեան մէջ՝ որ աւելի աւանդութեանց կապուած էր իր կազմութեան խորքին մէջ՝ վիշապը նոյնպէս գրեթէ բնաջինջ եղաւ, բաց ի անօրինակ պարագաներէ, օր. 1197էն հասած Սկեռոս ձեռագիր աւետարանին մէջ, ուր թէեւ վիշապին նկարագիրը խաթարուած, վիշապը պահեց գոյութիւնը: Ուրիշ արհեստներ որոնք ծաղկեցան ի Հայս, մութ մնալու են համար չենք կրնար ներկայացնել աստ: Իսկ հիւսուածեղէնը իր բոլոր ճիւղերով կը մնայ թանկագին, բեղմնաւոր, ընդարձակածաւալ դաշտ մը, որ սակայն անմըշակ կը մնայ մեր ուսումնասիրական իրականութեան մէջ. ասկէ գորգաշինութիւնը բացառութիւն կը կազմէ, և այս մասին է միայն որ պիտի կրնամ ծանրանալ:

Հայ քրիստոնէութիւնը միւս վերոյիշեալ միջոցներուն հետ գործածեց նկարը՝ վիշապը ստորնացնելու, աւելի ընելու, չար ներկայացնելու համար, լիահագագ և անվարան երգելով «Զգլուխ վիշապին Փրկիչըն ջախջախեաց» և այլն. (Կանոն Ը. աւուր Յայտնութեան). ուզեց հաւա-

տալ և հաւատացնել վիշապին պարտութիւնը. ասիկա բաւական չսեպելով՝ հայ Քրիստոնէութիւնն ալ գինած է ձիււոր Ս. Գէորգը վիշապաքաղ տէգով մը, մը խրրճուած գետնագալար վիշապին չարաշունչ բերնին մէջ: Նոյնպէս նաեւ Ս. Սարգիսը: Էջմիածնի մէկ հին վարագոյրին մէջ (Ս. Գէորգի) Ս. Թէոդորոս ալ նոյնը կը կատարէ. դիտելի է իրենց նմանութիւնը վիշապաքաղ Վահագնին հետ²: Ե(ղիշէ) Ե(պիսկոպոս) Գ(ուրեան) խօսելով վիշապասպանութեան վրայօք կ'ըսէր. «Քրիստոնէութեան նախկին թուականներուն մէջ այդ փրկարար դերը վերագրուած էր ձիււոր Սուրբերուն՝ ինչպէս աղնարկեցինք կանխաւ: — Այդ հրաշագործութիւնը կ'ընծայուի շատերուն՝ ինչպէս և Ս. Իլարիոնի, Պաղեստինացի մեծահռչակ կրօնաւորին, որ երբեմն այցելած ըլլալով Գաղմատացոց Եպիփանուս քաղաքը, ուր վիշապ մը մեծամեծ չարիքներ կը գործէր՝ կուլ տալով մարդ ու անասուն հաւասարապէս, հրամայեց տեղւոյն բնակիչներուն խարոյկ մը վառել, և ինքն սկսաւ աղօթել. «Եւ անգայր վիշապն իրրեւ յումերէ ուռկանեալ»: Իլարիոն բռնեց ու կրակը նետեց զայն. (Սուրբեր, ԻԲ. էջ 125-126): Ս. Աթանագինէս ալ իր ձեռքի ստիւրակէ գաւազանովը կը զարնէ և կը պայթեցնէ նոյնչափ վտանգաւոր օձ մը. (Վարք և

1. Վիշապագանց պաշտամունքը — Ա. — Բիւրակներն. — Ատրպետ, «Բազմավէպ» 1931, էջ 310, Բ. սիւն:

Արեւիկե բարեկամիս Ատրպետի այս յօդուածին մէջ յայտնած ինչ ինչ գաղափարներուն համախառն չեմ. արդէն 1931 Յուլիսին կարճ ժամանակ մը երբ Հայաստան կը գտնուէի, առիթը ունեցայ զինքը ճանչնալու և իր հետ ալ այս մասին անձամբ վիճարանելու: Իր այդ յօդուածին մէջ տեղագրական թանկագին պաշար կայ, սակայն իր ճիւղը Անահիտը վիշապին հետ նոյնացնելու և ուրիշ կարգ մը ծայրայեղ կէտերը հետո ևն համոզիչ ըլլալէ և նոյն իսկ հակառակն ալ ցոյց կու տան: Այս մասին զուցէ անդրադառնամ իմ մէկ նոր աւարած ուսումնասիրութեանս մէջ «Զրպաշտութիւնը հայոց մօտ և անոր հետքերը հայ արուեստին մէջ»:

2. Հայ էջեր. — Ա. Զօպանեան, Կար թիւ 44: